

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 37/1

19 հուլիսի 2013 թ.

Քննարկվեց «Գեղեցիկ Քնար» ԱԿ 12.07.2013 թ-ի դիմում-գանգատը «ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 19.06.2013 թ-ի թիվ 2100641 ստուգման ակտի դեմ:

«Գեղեցիկ Քնար» ԱԿ գանգատում մասնավորապես նշված է.

«ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ պետի 20.05.2013թ. թիվ 2213433 հանձնարարագրի համաձայն «Գեղեցիկ Քնար» ԱԿ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն՝ հսկիչ գնում, որի արդյունքում 01.06.2013 թ-ին կազմվել է թիվ 2213433 արձանագրությունը: Վերջինս հիմք է հանդիսացել Կապանի ՏՀՏ 19.06.2013 թ-ի թիվ 2100641 ստուգման ակտով «Գեղեցիկ Քնար» ԱԿ-ին 150.000 դրամ տուգանելու համար:

Նախ հարկ է նշել, որ Կապանի ՏՀՏ պետի 20.05.2013թ. թիվ 2213433 հանձնարարագրում (որի հիման վրա կատարվել է հսկիչ գնումը) և Կապանի ՏՀՏ պետի 10.06.2013 թ-ի թիվ 2100641 հանձնարարագրում (որի հիման վրա կատարվել է ստուգումը), Կապանի ՏՀՏ պետ Ռ.Գևորգյանի ստորագրություններն ամբողջովին իրարից տարբերվում են, և հայտնի չէ, թե նշված հանձնարարագրերում դրված ստորագրություններից որն է պատկանում Կապանի ՏՀՏ պետ Ռ.Գևորգյանին: Այս հանգամանքը հիմք է հանդիսանում պնդելու նշված հանձնարարագրերում ընդգրկված հարկային ծառայողների գործողությունները ոչ իրավաչափ լինելու մասին, ինչպես նաև այդ գործողությունների արդյունքում կազմված ակտերն անվավեր ճանաչելու համար:

Բացի դա, հսկիչ գնման արձանագրությունում նշվել է, որ հարկային տեսուչ Դ.Գրիգորյանի կողմից 01.06.2013 թ-ին ժամը 10:35-ին ք.Կապան, Հունան Ավետիսյան 4 հասցեում գտնվող «Գեղեցիկ Քնար» ԱԿ-ին պատկանող խանութից կատարվեց հսկիչ գնում 880 դրամի չափով՝ մեկ տուփ «Պառլամենտ ռեսերվ» ծխախոտ 750 դրամի և մեկ շիշ «Բոնակվա» ջուր 130 դրամ արժողությամբ, որի դիմաց վճարված գումարը պատվաճառողուհի Մարգարիտ Սաֆարյանի կողմից իբրև չի մուտքագրվել ՀԴՄ:

01.06.2013 թ-ին կազմված թիվ 2213433 արձանագրությունում նշվածը չի համապատասխանում իրականությանը, քանի որ կատարված գնման գումարը մուտքագրվել է ՀԴՄ և տրամադրվել է համապատասխան կտրոն: Կատարված գնման գումարը ՀԴՄ մուտքագրվելու փաստը հիմնավորվում է գնումը կատարվելուց հետո ՀԴՄ-ից դուրս բերված Z հաշվետվությամբ: Մասնավորապես, ժամը 10:38-ին ՀԴՄ-ից դուրս բերված Z հաշվետվության համաձայն, առաջին վաճառքը կատարվել է ժամը 09:22-ին, իսկ վերջին վաճառքը՝ ժամը 10:36-ին: Այսինքն, արձանագրությունում նշված ժամը 10:35-ին կատարված գնման գումարը ևս ներառված է 10:38-ին ՀԴՄ-ից դուրս բերված Z հաշվետվությունում նշված 1710 դրամի ընդհանուր հասոյթում:

Պետք է նշել նաև, որ հսկիչ գնումների վերաբերյալ 01.06.2013թ. թիվ 2213433 արձանագրությունը կազմելիս խախտվել են «Օրենսդրության պահանջները: Այսպես, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ի 1.5 կետի համաձայն՝ Հսկիչ գնումից հետո, բայց ոչ ուշ, քան հանձնարարագրում նշված ժամկետի վերջին օրը, հանձնարարագիրը ներկայացվում է տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, բացառությամբ հսկիչ գնման արդյունքում խախտումներ հայտնաբերելու դեպքի, երբ հանձնարարագիրը տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին է ներկայացվում հսկիչ գնումից հետո:

Տվյալ դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ պետի 20.05.2013թ. թիվ 2213433 հանձնարարագրի դարձերեսին նշված է, որ Ա/Կ նախագահը հրաժարվեց հանձնարարագրին ծանոթանալուց, սակայն թե երբ է հանձնարարագիրը ներկայացվել Ա/Կ նախագահին հայտնի չէ, ներկայացման որևէ ամսաթիվ առկա չէ: Ինչից կարելի է եզրակացնել, որ հանձնարարագիրը Ա/Կ նախագահին չի ներկայացվել:

<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի Հավելված 2-ի 1.6 կետի համաձայն՝ Արձանագրության երկու օրինակներն արձանագրության կազմման օրը ներկայացվում են տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Տվյալ դեպքում թիվ 2213433 արձանագրությունը կազմվել է 01.06.2013 թ-ին, սակայն ըստ արձանագրությունում կատարված գրառման, այն տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին է ներկայացվել 04.06.2013 թ-ին:

Թիվ 2213433 արձանագրությունը 04.06.2013 թ-ին ներկայացվելու փաստն հիմնավորվում է նաև նրանով, որ այն փոստային առաքմամբ ուղարկվել է միայն 04.06.2013 թ-ին: Այսինքն, տվյալ դեպքում խախտվել են <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի Հավելված 2-ի 1.6 կետի պահանջները:

Վերը նշված փաստերը վկայում են այն մասին, որ հսկիչ գնումների վերաբերյալ 01.06.2013 թ-ի թիվ 2213433 արձանագրությունը կազմվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, իսկ դրանում արտացոլված տվյալները չեն համապատասխանում իրականությանը, ինչն իր հերթին հիմք է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 19.06.2013 թ-ի թիվ 2100641 ստուգման ակտն անվավեր ճանաչելու համար:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 19.06.2013 թ-ի թիվ 2100641 ստուգման ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձի ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ պետի 20.05.2013 թ-ի թիվ 2213433 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Գեղեցիկ Քնար> ԱԿ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հսկիչ գնումների արդյունքների մասին 01.06.2013 թ-ի թիվ 2213433 արձանագրությունը (այսուհետ նաև Արձանագրություն), որով մասնավորապես արձանագրվել է.

հարկային տեսուչ Դ.Գրիգորյանի կողմից 01.06.2013 թ-ին ժամը 10:35-ին ք.Կապան, Հունան Ավետիսյան 4 հասցեում գտնվող <Գեղեցիկ Քնար> ԱԿ-ին պատկանող խանութից կատարվեց հսկիչ գնում 880 դրամի չափով՝ մեկ տուփ <Պառլամենտ ռեսերվ> ծխախոտ 750 դրամի և մեկ շիշ <Բոնակվա> ջուր 130 դրամ արժողությամբ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: <Գեղեցիկ Քնար> ԱԿ պատվաճառողուհի Մարգարիտ Սաֆարյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը, ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ պետի կողմից 10.06.2013 թ-ին հրապարակվել է թիվ 2100641 հանձնարարագիրը՝ ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Գեղեցիկ Քնար> ԱԿ-ում հսկիչ-

դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում կատարելու վերաբերյալ: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 19.06.2013 թ-ի թիվ 2100641 ստուգման ակտը, որով կիրառվել է «Նսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամի չափով:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ պետի 20.05.2013թ. թիվ 2213433 և 10.06.2013թ. թիվ 2100641 հանձնարարագրերն արձանագրեց, որ իրոք, նշված հանձնարարագրերում ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ պետ Ռ.Գևորգյանի ստորագրությունները տարբեր են:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ պետը մինչև 21.05.2013 թ-ը գտնվել է արձակուրդում, որի հետևանքով ՀՀ ԿԱ ՊԵԿ 20.05.2013թ. թիվ 2213433 հանձնարարագիրը ստորագրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ պետի ժամանակավոր պաշտոնակատար, նույն տեսչության պետի տեղակալի կողմից:

Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում 20.05.2013թ. թիվ 2213433 հանձնարարագրում պետք է նշվեին ոչ թե ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ պետի, այլ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ պետի ժամանակավոր պաշտոնակատարի տվյալները: Արդյունքում, ըստ էության, խախտվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ի 1.4 կետի պահանջները:

Քննարկման ընթացքում պարզվեց նաև, որ խախտվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ի 1.6 կետի պահանջները: Մասնավորապես, վերջինիս համաձայն. «Արձանագրության երկու օրինակներն արձանագրության կազմման օրը ներկայացվում են տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին»:

Քննարկվող դեպքում հսկիչ գնումների արդյունքների մասին արձանագրությունը կազմվել է 01.06.2013թ-ին, սակայն տնտեսավարող սուբյեկտին այն ներկայացվել է 04.06.2013թ-ին, ինչի մասին են վկայում Արձանագրության «Արձանագրության մեկ օրինակը տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին ներկայացնելու ամսաթիվը» մասում դրված ամսաթիվը, ինչպես նաև Արձանագրությունը փոստային առաքմամբ 04.06.2013 թ-ին տնտեսավարող սուբյեկտին ուղարկվելու վերաբերյալ ապացույցը (ծրարը):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.»:

Տվյալ դեպքում խախտվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ի պահանջները, ինչն ըստ էության հիմք է հանդիսանում ստուգման ակտը չեղյալ համարելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կապանի ՏՀՏ 19.06.2013 թ-ի թիվ 2100641 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ